

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 34

26 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նորեկները գրականութեան մեջ	ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ
Բուրաստան	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Քիչ մը հարսարապեսական	Ա. ԹԱՀԹԱՃԵԱՆ
Իմ սերս (Բանաստեղծութիւն)	Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Անճանալի խոհեր (» »)	ՄԻՍԱԲ ՄԵԾԱՐԵՆՑ
Բժեկական Գրոնիկ	ՏՈՔԹ. Տ. ԱԼԼԱՀՎԵՐՏԻ ՈՐԴԻ

Թաւանանեալ — Մրցանակին շուրջը

Խմբագրական Նօթեր

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն զօժ. եւ զաւանդելուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 րուպի: Թղթաստանական ծախսը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Զեմ-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیہ غلطہ (ماسیس) غرضی ادارہ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

9-2760-100-100-100-100

1000

一、關於我國經濟建設之現狀
 二、關於我國經濟建設之方針
 三、關於我國經濟建設之步驟
 四、關於我國經濟建設之組織
 五、關於我國經濟建設之經費
 六、關於我國經濟建設之人才
 七、關於我國經濟建設之技術
 八、關於我國經濟建設之交通
 九、關於我國經濟建設之教育
 十、關於我國經濟建設之衛生
 十一、關於我國經濟建設之社會
 十二、關於我國經濟建設之文化
 十三、關於我國經濟建設之藝術
 十四、關於我國經濟建設之體育
 十五、關於我國經濟建設之宗教
 十六、關於我國經濟建設之法律
 十七、關於我國經濟建設之政治
 十八、關於我國經濟建設之軍事
 十九、關於我國經濟建設之外交
 二十、關於我國經濟建設之國際

July 30 1885



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սնենալ, որովհետեւ լաւ մեքենա մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱԾՍ. ՓԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Gie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գտնէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՀԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐՍ.

- 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
- 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

- 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
- 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- 1. Սուլթան Համամ, Թ.
- 2. Սուլթան Պէյաղլիա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵԻՒՏԱՐ

Չարը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կատարելաբար Երաւաստունութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

3-10

ՏԱՆԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ

զուսկներուն աչաց պայծառութիւնով կը կայանայ, երբ անոնց աչքը կը գունատի, մտածմունքի և ներութեան պատճառ կը թայ: Եթէ այսպէս տկարացած տղու մը



SCOTT'S EMULSION

տղուն՝ առողջութիւնը շուտ մը կը վերագառնայ և մտածմունքը կը դադրի: Վասնզի Ըսգօթի Բաղադրութիւնը հիւանդութեանց դէմ կը դնէ, և զտղայքը զօրաւոր մեծնալու կ'օգտէ և անոնց աչքերը փայլին և զուարթ կը պահէ. մշտ

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԸԴՐՈՒԹԻՒՆ

պահելու է. Ասիկայ զՁեզ և Ձեր զուսկները դիշէր ու ցորեկ ցաւերէ և յուսահատութիւններէ կը փրկէ: Ուշադիր պէտք է ԸԼԼԸԸ որ շինք վրան այս նշանով վարդազոյն փաթեթի մը մէջ է — եթէ կ'առնէք

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԸԴՐՈՒԹԻՒՆ

փոշկութիւն առած կ'ըլլաք:

Ընկերու վրայ ասոր սշա-
դրութիւնը ընել պէտք է:

22

Բոլոր բեռնորոշները և բեռնաճանապարհները և ծախի:

ՍՊԱՌՄԱՆ ՄՕՏ

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ

Ա Ռ Չ Ե Ռ Ն Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք

Հայերէն - Գաղղիերէն

Չրդ Տ ՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կը պարունակէ արեւի քան 25,000 քառ., ուն, եւլն., գործածական քառերու ընկիր հաւաքածոյ մը,

Պիսանի ամէն գործի մարդու — Անհրամեոս ամէն դպրոցականի
ԳԻՆ ՄԻԱՅՆ ԵՐԵՔ ԱՄՍՈՅ ՀԱՄԱՐ.

Քառքոնէ կազմ 25 դր., Ընկիր լաքակազմ 27 դր., Կաւեկազմ 32 դր.

1906 Յունիսար մէկէ վերջ երէ տակաւին անվաճառ օրինակներ մնացած ըլլան, գիներուն վրայ զգալի յաւելումով մը միայն պիտի վաճառուին:

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ: Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

27, Ֆիննանճըրար Ամերիկան խան, Կ. ՊՈԼԻՍ

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԲՈԼՈՐ ԳՐԱՎԱՃԱՌԱՅ ԳՈՎ

ԱՄՆԱԽԱՆ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 34

26 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

ՆՈՐԵԿՆԵՐԸ



Ասկէ առաջ, Մասիսի 30րդ թիւով, Մեր Կիճ Գրողները խորագրուած տեսութեան մը մէջ, փորձած էի վեր հանել ընդհանուր նշանակաւորը կին գրողներու մեր մէջ կատարած գրականութեան, գծել սահմանը կիներու կողմէ անոր տրուած մշակումին, սկիզբէն մինչեւ մեր օրերը, ինչպէս բացատրել՝ այն պատճառները՝ որոնք գրականութեան նուիրուելու կը մղեն մեր կիները, և այն շարժառիթները՝ որոնք կ'ուժացնեն զանոնք անկէ:

Տիկին Ջապէլ Եսայեանի «Նորեկները» յօդուածը, առիթը կուտայ անգամ մըն ալ անդրադառնալու այդ հարցին, որովհետեւ ան կը ներկայացնէ տակաւին հետադօտելի կողմեր, որոնց մէկ քանիին ծայրը վեր կ'առնէ երիտասարդ գրագիրուհիին, անցողաբար:

Տիկին Եսայեան իր ուշադրութիւնը կը սեւեռէ գլխաւորաբար, երկու կէտի վրայ, զիտել տալով որ, կին անունը միշտ հրապուրիչ պիտակ մը եղած է մեր գրականութեան համար, որով այդ տարրին մօտեքը գրական ասպարէզին մէջ՝ միշտ հիւրընկալ ներողամտութիւնով մը ընդունուած է և չափէ աւելի փայփայուած, փաղաքշուած և հետեալաբար շփացուած: Դիտողութիւնը ճիշդ է, և այդ պարագային իսկ մէջ կարելի է փնտռել պատճառը այն անգոհացուցիչ նուիրումին՝ զոր գրական ասպարէզը մօտող կիները, մասնաւորաբար նորեկները, ցոյց կուտան: Որովհետեւ Մամուլը միշտ բաց պահած է իր դուռները և հիւրընկալ մեծարանքներով ողջունած ամէն անոնք՝ որոնք չըջաղգեստի մը շրջանովը կը մօտենան, անոնք իրենց ընծայուած մեծավայելուչ ու անակընկալ ընդունելութենէն չլացած՝ միամիտ հա-

ւատքը սնուցած են ըլլալու ա'յն՝ ինչ որ կը սպասուին: Այս վստահութիւնը, այս ինքնախաբ գոհունակութիւնը՝ գլխաւոր ազդակ մը եղած է որ անոնք պէտք չտեսնեն երբեք ինքզինքնուն անդրադառնալու, տեսնելու համար թէ, Մամուլին կամ լրագրագետներու կողմէ եղած սիրազեղ ողջագութեանը՝ իրենց գրիչին արժանի յարգանք մըն է, թէ պարզապէս պիտէ ու մօրուքէ զուրկ ըլլալու հմայքին: Առանց տարակոյսի, վերջին յուռութքին համար է աղ, որովհետեւ տեսնուած է որ, կնոջական ստորագրութեան մը պիտակովը ի'նչ թուղթ որ հասած է խմբագրութիւններու՝ անոնք առանց չատ աջը ձախը մտածելու, հրատարակած են, յաճախ առաջին յօդուածի մը համար իսկ՝ «համակրելի գրագիրուհի» կամ «խոստմնալից գրող» հռչակելով անոնց հեղինակը, նոյն իսկ անանկ գրուածքներու համար, որոնք ոչինչով կը տարբերին դպրոցական շարադրութիւններէ, ամենախեղճ նիւթերու վրայ: Ընդհանրապէս գրողի մը ուղղութիւնը, գաղափարականը և ձգտումը՝ կը կազմուին իր առաջին քայլերուն մէջ իրեն եղած ընդունելութեան համեմատ, և երբ Մամուլին կողմէ ա'յնչափ փայլուն յուսադրութիւններով կը պսակուին է'ն երկրորդական ոչնչութիւններն իսկ ո'ր և է միջակ միտքի մը, բնական է որ՝ այդ մօլար գնահատումը՝ սահմանափակ գաղափարական մը կը ներշնչէ անոնց հեղինակներուն և իրենց անձին վրայ կազմել կուտայ հաւատք մը՝ ամէնէն անձուկ իտէալներու վրայ հիմնուած:

Աս չէ՞ պատճառը Տիկին Եսայեանի գանգատին թէ՝ «փափաքելի էր սակայն որ կին

գրող մը չգոհանար իր համեմատական յաջողութիւններով»։ անցողակի դիտողութիւն մը, պզտիկ գանգատ մը, որ սակայն շատ բան կը խտացնէ իր մէջ, որովհետեւ ան պատկերն է նորեկներու պարզած կացութեան, զոր այնչափ մերկապարանոց կերպով քողամերկել չէ ուզած կ'երևայ «Նորեկները» ի ստորագրողը, կնոջական փափկանկատութիւնով մը՝ հանդէպ իր սեռակիցներուն։ Սակայն, սքողուի թէ մերկացուցութիւնը այդ պարագան, իրողութիւն է որ, իրենց անվիճելի կարողութիւնովը անունի մը տիրացած կիներէն դուրս, մեր կին գերողները, կամ ընդհանուր առումով մը, ամէն անոնք որոնք գրիչի աշխատութեան նուիրուիլ ուզած են և դրական գրօսանքներ փորձած, տարրական աստիճանի վրայ գրտնուող եռանդէ՝ մը մղուած կատարած են այդ բանը, և գոհացած այն խաբուսիկ ու անարժէք յաջողութիւններով՝ որոնք յաջորդած են իրենց քայլերուն, — աւելի իրենց երկայն մազին համար՝ քան ճշմարիտ արժանիքի մը, — քաջալերուած, չլացած ու գինովցած այն ընդունելութենէն՝ զոր լրագրապետներ ցոյց տուած են իրենց, առանց հետամտելու կատարելագործութեանը իրենց ձիրքերուն, մշակմանը իրենց տաղանդին, և ուղղութեան մը հպատակեցնելու ջանքին՝ իրենց կարողութիւնները։ Ասիկա է՝ն վրասակար ուղղութիւնն է՝ որուն կարենայ ենթարկել ինքզինքը որ և է գրող։ Եւ սակայն դժբաղդաբար, ա՛ս է իրողութիւնը կին գերողներէն նորերուն համար, և ասոր համար չէ՞ որ Տիկին Եսայեան բոլոր անոնց մէջէն երկու հոգի միայն կը գտնէ, իրենց ձիրքերովը խոստմնալից, իրենց կարողութիւններուն տէր, և իրենց ուղղութեանը գիտակից։ Ա՛լ աւելի ուշագրաւ է սա պարագան որ, Տիկին Եսայեան անոնց մէջէն կ'ընտրէ ա՛յն տեսակ զոյգ մը՝ որմէ մէկը՝ Տիկին Արշակունի Թեոդիկ՝ հազիւ մէկ քանի ինքնագիր գրուածքով միայն ծանօթ է, իսկ միւսը՝ Օրիորդ Սաթենիկ Յարութիւնեան՝ մի միայն մէկ գրուածքով մը։ Ու ասիկա իրաւունքով, քանի որ գրուածքին քանակը չէ որ

կը յայտնէ գրիչին կարողութիւնը՝ այլ որակը, և որ և է գրիչ՝ առաջին արտադրութիւնով մըն ալ կը մատնէ իր յատկութիւնը։ Այս երկուքին կարելի է կցել նաև, աւելի իր նախկին գրուածքներուն համար՝ Օր. Հայկանոյ Մառքը, և Ք. Էլզան, որ թէև քիչ գրուածքներով ծանօթ, սակայն իր վարժ ու ձկուն գրիչով և թափանցող միտքովը, փափուկ գագացումներով թրթռուն կազմուած հոգի մը կը մատնէ իր մէջ։

Հիմա, այս քանի մը նկատողութիւններէն ետքը, պէտք է տեսնել թէ, ի՞նչ ազդակներ են որ պիտի կրնան նորահաս կին գրողները անունի մը եւ արժանիքի մը տիրացնել, եւ զերծ ընել իրենց աշխատութիւնները ունայն ժամավաճառութիւններէ։

Նորեկներուն մէջ, — միշտ կիներու վրայ ըլլալով խօսքը, — տեսնուած ընդհանուր յատկանիշը սա՛ է որ, անոնք իրենց գրիչով պատրաստուած կարողութիւն մը չեն ներկայացներ՝ դրական աշխատութիւններու համար, ո՛ր եւ է ուղղութեան մէջ, իրենց մտածումները շարադրել կարենալու կարողութիւն մըն է իրենցը լոկ, եւ անոնք գրիչին ձեռք կ'առնեն՝ յագուրդ տալու համար միայն իրենց մէկ քմայքին, ուր սակայն գաղափար, մտածման հասունութիւն, հոգեբանական վերլուծումներ կը պակսին։ Կարելի չէ ըսել թէ ամէն գրուածքի անխուսափելի պայմաններն են ասոնք, բայց երբ գոնէ այդ յատկութիւններուն մէկէն կամ միւսէն զուրկ է գրուածք մը, անոր արժէքը պարզ շարադրութենէ մը անդին չանցնիր, եւ ասոր է որ պէտք է ուշադիր ըլլան գրիչի ասպարէզը նետուող նորեկները, եւ ամէն անոնք՝ որոնք գրիչ կը շարժեն այսօր, — եթէ վերջապէս իրենց փառասիրութիւնը անուննին թերթի մը մէջ հրատարակուած տեսնելու պզտիկ հաճոյքին մէջ չսահմանափակուիր։

Տխուր է հաստատել որ, վերջին ատեններս սա իրական փորձառութեան բաղնիքն է որ, գրելու եռանդը ունեցող ու ասպարէզ մը փնտռող մեր աղջիկներէն չատեր, չեն ներկայացներ դրական այնչափ դոհացու

ցիչ ու մխիթարական կարողութիւն մը, որ-
չափ կը սպասուէր, կիներու յատուկ Ծաղիկի
հրատարակութիւնը՝ առիթը տուաւ անգամ
մըն ալ հաստատելու թէ, քմայքներով ու
պղտիկ մտածումներով միայն օրօրուող գրիչ-
ներու դասակարգը կը ցեր կն շատցնել
մեր աղջիկներէն շատերը, և ուրիշ ոչինչ,
ա՛յն աղջիկները՝ որոնք՝ զերծ որ և է պատ-
ճառէ ու նկատումէ՝ պատրաստակամութիւնը
ու եռանդը ունին գրական ասպարէզը իշնել
վութալու։ Այս տողերը չունին երբեք նը-
պատակը՝ անշքացնելու Ծաղիկի հրատարա-
կութեան գեղեցիկ ու պատուաբեր ձեռնարկը։
Բայց ինչ որ միևնոյն ժամանակ անվիճելի է,
սա իրողութիւնն է որ, գրական կարողու-
թիւնը այն աղջիկներուն՝ այն նորեկներուն՝
որոնք յայտնուեցան անոր միջոցով, երբեք
չարդարացուց ակնկալուած յուսադրութիւնը։
Եւ ասիկա՛ է որ դիտելի է ու չահեկան՝
գրական տեսակէտով։ Ու այս վերջին ըմ-
բռնումով է միայն որ կ'ուզեմ նկատել ա-
մէն բան, և գնահատումի ենթարկել գործը
գրական այդ աշխատանքներուն։ Կ'արժէ
որ այս հիմնականէն դիտուած, իրենց ուշադ-
րութիւնը դարձնեն անոնք այս պարագային
և նկատողութեան առնեն գրականապէս այն
կացութիւնը և ուղղութիւնը՝ որոնցմէ կա-
խում ունի իրենց գրական ապագան։ Լըր-
ջօրէն նկատելի չէ՝ որ տակաւին զուտ գրա-
կան սեռէն ոչինչ արտադրեցին գործի վրայ
գտնուող այսօրուան նորեկները, կարենալ
հաստատելու համար իրենց մէջ գրական կա-
րողութիւն մը, և սեփականելու համար ար-
ժանիք մը՝ որ ամէն իրաւունքով անունի մը
պիտի տիրացնէր զիրենք։ Ինչ որ կը ցան ար-
տադրել ցարդ, միջակ ու դիւրին նիւթերու
շուրջը քիչ շատ խնամքով շարադրուած
կցկտուր հատուածներ են միայն, որոնք չեն
կրնար գրողը և իր կարողութիւնը յայտնել,
անջատուելով ամէն միջակութենէ և հասա-
րակ—տեղիք շարադրութիւններէ։ Այս երեւ-
ոյթը չի կրնար անշուշտ յանձնարարելի ըլ-
լալ, ո՛չ ալ գոհացուցիչ վիճակ մը անոնց՝
որոնք գրիչ շարժելու մէջ փառասիրութիւն
մը ունին հարկաւ, մանաւանդ իրենց ապա-
գային համար։

Պէտք է գիտնալ ուրեմն թէ, ի՞նչ բանէ
ծագում կ'առնէ այս իրողութիւնը։ Դիւրաւ
կը հետեւի բոլոր նախորդ տողերէն թէ,
մշակումի, գրական դաստիարակութեան,
մտաւորական դարգացումի, գրական ճաշակի
ու տաղանդի պայմաններն են որ կրնան
լրացնել այն պէտքը՝ որ պակսիլ կը թուի
գրիչի աշխատութեան նուիրուած այսօրուան
մեր աղջիկներուն քով։ Առանց ասոնցմէ
մէկուն կամ միւսին, կարողութիւն մը մի-
ջակէ վեր չկրնար բարձրանալ։ Չարժեք եր-
կարել ուրեմն, հաստատելու համար թէ,
կարողութիւն մը ձեռք բերելու, անունի մը
տիրանալու, գրականութեան մէջ տեղ մը
ունենալու համար, պէտք է աւելի ջանադիր
ըլլալ այդ պայմաններուն լրացումին, քան
ամէն ուղղութիւնով գրիչ շարժելու աննը-
պատակ եռանդ մը սնուցանելու։

Այն պահուն՝ երբ բաղմամբիւ նորահաս
աղջիկներ գրիչ շարժելու եռանդուն փա-
փաք մը ցոյց կուտան, ապարդիւն չըլլան
թերեւս այս թելադրութիւնները։

Այս նկատումով էր որ մղուեցայ իրենց
ուղղելու այս տողերը, երբ տակաւին իրենց
վրայ անդրադառնալու վիճակի մը մէջ կը
գտնուին, իրենց առաջին քայլերուն մէջ։
Կ'արժէ որ իրենք իրենց խորհրդածեն այս
մասին, որովհետեւ աւելի աղէկ է գրական
նութեան մէջ երբեք չըլլալ բան մը, քան
անպէտ միջակ մը ապագային։

ԵՆՈՎԻՔ ԱՐՄԷՆ

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ եկեղեցական մը գրա-
ւորապէս յայտնած ըլլալով Ամենայն Հայոց
Ս. Հայրապետին, թէ արդեօք կարելի չէ՝
ամուսնական որոշ Օրէնք մը հաստատել, հիմ
բռնելով Հայրապետական հին և նոր վճիռ-
ները, Ն. Ս. Օծութիւնը պատասխաններ է
թէ «Հայրապետին համար՝ ամուսնական օ-
րէնքը իր խիղճն է։ Բայց որովհետեւ Կ.
Պօլսոյ Ս. Պատրիարքը աստուածաբան մըն
է, կարող է՝ եթէ պէտքը կը գտայ՝ այնպիսի
օրէնք մը բանաձեւելու»։

ՔԻՉ ՄԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ

ՄԱՅՐ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

(ԵՐԵՐԵՐԻ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՅՕՒՈՒԱԾ)

Վարժարանական շինութեան մը հակառողջապահիկ պայմանները թուած ժամանակ՝ պէտք չէ մոռնալ փոշիին ու խմելու ջուրին ոչ նուազ կարեւոր պարագաները:

Գետնի տախտակամածները աշակերտներուն անհամար և ցելոտ ոտքի հարուածներուն ներքեւ առաւօրէն փոշի կ'արտադրեն որուն թունաւորիչ յատկութիւններն ամեւնու ալ ծանօթ են: Փոշիին առաջքը արմատական կերպով առնել կարելի չլլալուն՝ պիտի բաւականանամ միայն խորհելով անոր համեմատաբար նուազագոյն քանակութեամբ արտադրուելու միջոցներուն վրայ:

Եղևնափայտը (sapin) որ իր ածանուծեանը համար ընդհանրացած գործածութիւն մը ունի տախտակամածներու շինութեան մէջ, կաղնիփայտէն աւելի կակուղ ըլլալուն, չիման ներքեւ շատ աւելի դիւրութեամբ կը մաշի, և հետեւաբար շատ դիւրութեամբ փոշի կ'արտադրէ. ուրեմն տախտակամածներու շինութեան համար կաղնիփայտը նախամեծար պիտի համարիմ, քանի որ սա միանգամայն դիմացկուն ըլլալու առաւելութիւնն ալ ունի:

Գաղափարաց այս շարքով, քարէ տախտակները և կամ նոյն դասակարգին պատկանող քարեղէն շինուածանիւթեր, — որոնք կարծր ըլլալուն փոշի չեն արտադրեր, երկար կը դիմանան ու միեւնոյն ժամանակ ջուրով դիւրութեամբ կը մաքրուին, — առաւելագոյն պատճառներով պիտի կրնայինք գործածել, եթէ իրենցմէ բղխած բնական ցրտութիւնը չըսպառնար խանգարելու աշակերտաց առողջութիւնը: Ճարտարարուեստը սակայն՝ որպէս ամէն ատեն, այս պարագային մէջ ալ կրցած է գտնել միջին ճամբան, ստեղծելով կարգ մը նորահնար շինուածանիւթեր որոնց գործածութիւնը ամէն կերպով

կը գոհացնեն արուեստագէտին դժուարահաճ ընտրութիւնը, և որոնց վրայ այժմէն խօսիլ, մեզ շատ հեռուն կրնայ տանիլ և շեղեցնել նիւթերնէս:

Գալով խմելու ջուրի պարագային՝ բնական է որ չենք կրնար պահանջել մեր վարժարանաց հոգաբարձուներէն որպէս զի իրենց խնամոցը յանձնուած աղւոյց թաշաւէլէնի ջուր խմցնեն, օրինակի համար. այսուհանդերձ, իրաւունք ունինք սպասելու որ մեր մանկտիքը հակառողջ պայմաններէ զերծ՝ մաքուր ջուրով անանին: Այս այսպէս ըլլալով՝ անձրեւի ջուրը, ի մէջ այլոց, կրնանք նախընտրել հետեւեալ պայմաններուն մէջ:

Շէնքին յատակը, հեռու ճեմիչներու յատկացած կոյուղիէն, կառուցանել ընդարձակ ջրամբար մը, մէջը երեք մասնակի բաժանումներով, եւ իւրաքանչիւրին համապատասխան տարբեր խորութիւններով: Անձրեւի առաջին ջուրերը՝ որոնք ապականուած են տանիքին վրայ գտնուած աղտոտութիւններէն՝ թողուլ որ դուրս թափին, մինչև որ կղմինտրներն ու ջուրի ճամբաները լաւ մը մաքրուին, այնուհետեւ միայն ուղղել ջուրերը ջրամբարներէն առաջինին մէջ ուր՝ զատուելով իրենց մրուրէն՝ պիտի հոսին երկրորդին մէջ, թորուելու ու անկէ ալ փոխադրուելու համար երրորդին մէջ, որ բուն իսկ ջրամբարն ըլլալով՝ պիտի կրնայ պարունակել բաւականաչափ քանակութիւն մը՝ խմուելու յարմար մաքուր ջուրի:

Ջրամբարները մաքրելու համար պարպելու յատուկ ուղիներ չինել կարեւոր նախազգուշութիւն մըն է որ պէտք չէ անտես առնուի այս առթիւ,

Ճեմիչներու կոյուղիներուն պարագան ևս նուազ կարեւորներէն չէ: Յաւանութիւնը չունիմ պահանջելու որ Մայր Վարժարանին

համար կատարելագործեալ կոյուղիներ չինենք, բայց գէթ՝ բացարձակ կարևորը ու անխուսափելին, ինչ որ ուղղակի մեր առողջութիւնը պիտի պահպանէ՝ չանտեսենք։ Այսպէս, կոյուղիները կէս ճամբան ընդհատուած չթողունք, տանք անոնց ճուռձեւ հատուած մը, չափերու պարտաւորիչ համեմատութիւն մը, հոսանքի բաւականաչափ զառիթափ մը, վերջապէս ներքին ձեւերու խնամեալ շինուածակերպ մը, որպէս զի ապականութիւններն այս կոյուղիներուն մէջ առանց կառչելու անկիւններու, խոռոչներու և կամ ձեւերու խորտուրտութեանց, դիւրաւ հոսին անհետանան, ու գարշահոտութեանց թունաւորիչ բուրու մներ չարտադրեն։

Ամբուքեան ու երկաւաքեւութեան պայմանները. — Շէնքի մը հիմերը երբ ուժով հողի վրայ կառուցուած են, որու պատերը խնամով հիւսուած ու իւրաքանչիւրին չափերը յարկերու կրելիք ծանրութեանց համեմատութեամբ դրուած են, վերջապէս, երբ շէնքի մը տախտակամածները երկաթ ձողերով ըռուուած ու պատերու ընդհանուր բարձրութեան մէջ զանազան կետերէ հորիզոնական եւ ուղղահայեաց երկաթ կապերով լաւ մը կապուած են, այդ շէնքը պէտք չունի վախճալու երկրաշարժի ցնցումներէն։

Իսկ հրդեհի պատահարներուն գալով, աւելորդ է ըսել թէ շէնքը պէտք է կառուցուած ըլլայ քարէ կամ աղիւսէ, տանիքը փոխանակ փայտի՝ շինուած ըլլայ երկաթ ձողերէ. պատուհանները պատսպարուած ըլլան երկաթ փեղկերով, ու վերջապէս շէնքին ամբողջութիւնը պէտք է որ կարելի եղածին չափ անջատ կառուցուած ըլլայ շրջակայ փայտաշէն շէնքերէն։ Այս ամէնը՝ այն պարագային համար ուր դուրսէն հրդեհ կը ծագի։ Իսկ վարժարանին մէջէն հրդեհ ծագած պարագային, որպէս զի անոր տարածումը արգիլուի ու ազդեցութիւնը չեղօքանայ, անհրաժեշտ է որ գետնի տախտակամածները փոխանակ փայտաշէն ըլլալու՝ երկաթ ձողերով ըռուուած ու ասոնց անջրպետները իրենց սուր կողմերուն վրայ դրուած՝ ծակ աղիւսէ կամ արիկներով գոցուած ըլլան, և որոնց վրայի փայտեայ տախտակամածն ալ անկի-

զելի նիւթով մը շինուած ըլլայ։ Շէնքին զանազան մասերը իրարմէ անշատուած ըլլալու են՝ յաճախ հաստ պատերով ու դասարանէ դասարան հաղորդակցութեանց դուռները երկաթ փեղկերով։

Յարկերը իրարու միացնող սանդուղները թուով առ նուազն պէտք է երկու ըլլան, մէկը քարաշէն ու շէնքին մէջ կառուցուած, ծառայելով յարկերը իրարու հետ հաղորդակցութեան մէջ դնելու, իսկ միւսը դուրսէն շինուած ու երկաթեայ, ապահովութեան համար կառուցուած, որպէս զի հրդեհի մը պարագային՝ ամենէն բարձր յարկերէն սկսեալ՝ շէնքին զանազան մասերը միացած ըլլան դուրսին հետ։

Ինչ որ գրեցի դիմացկունութեան մասին, աւելորդ է ըսել թէ անոնց ամենքն ալ հասարակապէս կրնան պատշաճիլ շէնքի մը երկարատեւութեան համար ալ։ Բայց ինչ որ պիտի չեշտեմ այս առթիւ, սա է որ վարժարանական շէնք մը կոչուած ըլլալով կանգուն մնալ սերունդէ սերունդ, շէնքին արտաքին երեսները փոխանակ խնայողական անիմաստ նկատումով մը ձեւով պատելու, այս երեսները պէտք է ըլլան բոլորովին քարաշէն, զերծ մնալու համար միանգամ ընդ միշտ նորոգութեանց անհաճոյ տաղտուկէն ու ծախքերէն, և կամ հակառակ պարագային՝ անխուսափելի կերպով, փտտումի վտանգէն, ինչ որ կը հաստատէ Իճատիէի ներսէսեան վարժարանի երեսի պատերուն արդի վիճակը, և այլն։

Այս ընդհանուր տեսութեանց մանրամասնութիւնները զանց կ'առնեմ, Մասիսի սահմանէն դուրս չելլելու համար, միանգամայն մտածելով որ այս շատ համառօտ կերպով գրածներուս գուցէ կէսն անգամ չը պիտի իրականացած տեսնեմ ապագայ Մայր վարժարանի շինութեանց մէջ։ Թաւառանքեան և իգնաեան էֆէնտիները բան մը չը պիտի խնայեն, ու բարեսիրարար պէտք եղած գումարը պիտի արամադրեն. ատոր ոչ մէկ կերպով տարակոյս չկայ։ Բայց թէ այստեղ, շինութեան կատարումը ստանձնողները իրենց գիտցածէն ու տեսածէն պիտի չեղին։ Հոտ է խնդիրը, և կը մաղթեմ որ սխալած ըլլամ իմ այս երթադրութեանս մէջ։

ԱՐԱՍ ԲԱՆԹԱՅԱՆ

ԹԱԻՇԱՆՃԵԱՆ—ՄՐՑԱՆԱԿԻՆ ՇՈՒՐՋԸ

Լիվրնոյ Հէրթս, որ ժամանակին համակրութեամբ ողջունած էր հակալքութեան յօդուածներու մրցումի մը հաստատուիլը՝ հայ թերթերուն մէջ՝ Յովհ. Էֆ. Թաւանձեանին կողմէ, իր այս երկուշաբթի օրուան թիւին մէջ ո՛չ նուազ համակրալից տողերով կը ծանուցանէ անոր արդիւնքը։ Անգլեֆրանսական թերթը համառօտիւ յիշելէ ետքը առաջին և երկրորդ «պսակաւոր»ներուն՝ Տ. Վարան վարդապետի ու Պ. Բիէռ Աբէռի գրուածքներուն նիւթը, մրցանակներուն բաշխումը և այլն, ճշմարտապէս մարդասիրական (philanthropique) կը գտնէ այս ձեռնարկը, շնորհիւ թէ տեղական մամուլին համար տեսակին մէջ եղական է այս կարգի մրցում մը, գերազանցապէս հանրագումար, որ պատիւ կը բերէ զայն հաստատողին։

Եւրոպական լուրջ թերթի մը այս անկեղծ գնահատումը նշանակալից կը գտնենք մանաւանդ՝ բաղդատմամբ մեր թերթերէ մէկ-երկուքին մէջ երեւցած այն կարգ մը յօդուածներուն, որոնք զաւելտական կամ անոր մօտ ձեւերու տակ, անճահ հեգնութիւններ, անձնական ակնարկութիւններ, ծաղրանքներ ցայտեցուցին յաջորդաբար, «սրամտութիւններ փախցնելու» մարմաջէն բռնուած, եւ որոնցմէ պղտիկ բաժին մը չէր որ ունեցաւ Մասիսի խմբագրութիւնն ալ, մասնաւորապէս Իզմիրի շաբաթաթերթին կողմէ։ Չպատասխանեցինք եւ չպիտի պատասխանենք մրցակցական նկատումներէ թելադրուած այդ տղեղ գրուածքներուն, — որոնք լրագրական հին բարքերը կը յիշեցնեն և զորս կրնան շարունակել ուղածուն չափ — մտածելով թէ մեր ընթերցողները տաղտկացնել և անոնց զրկանք մը պատճառել պիտի ըլլար՝ այդ կարգի բանավէճերով լեցնել Մասիսի էջերը։

Դաւով բուն իսկ խնդրոյն, հակալքութեան պայքարին, — որուն վրայ՝ մեր մասին՝ քանիցս գրած ենք ասկէ առաջ, — «Դրական

Մրցումներ» խորագրին տակ շատ գեղեցիկ իմբպրական մը կը նուիրէ անոր Բիւզանդիոն իր երեքշաբթի օրուան թիւով։ Մեր յարգելի պաշտօնակիցը, ի մէջ այլոց, կը ծանրանայ նոր տեսակէտի մը վրայ, որ չի պարզուեցաւ երբեք, և զոր կ'արժէ առաջ բերել. — «Եւրոպայի, Ամերիկայի մէջ այս կամ այն գրական կամ գիտական մարմինն իր նշանակած մէկ նիւթին համար դրամական մրցանակ կամ մրցանակներու շարք մը կը հաստատէ, համըսաւոր գործեր ու գիտուններ կը մասնակցին, և խնդրագոյն մրցանակը կորդոն աւելի կը գովուի կը փառաւորուի. այնպէս որ ծիծաղելի պիտի դառնար նա որ գործին մէջ «մամուլայապաշտութիւն» կամ «գձուձ չարաչահութիւն» նշմարելու տխմարութիւնը գործէր։ Մեր մէջ, Սահակ — Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութենէն, կամ Մոսքուայի Բանասեան պատմական ու գիտական մրցանակաբաշխութենէն 10էն մինչեւ 60 լիրա ընդունելու ակնկալութեամբ ամէն տարի — կամ ամէն երկու տարին անգամ մը — հատորներ կը յօրինուին, եւ ո՛չ ոք երբեք կրցաւ ըսել թէ մրցումը ռեֆրամի համար էր, կամ մերցման մասնակցողներ միայն դրամի սիրով խորհողներ ու գրողներ էին։ Ի՞նչպէս ուրեմն Նիւ Եօրքի վաճառականին խոստացած մըրցանակը կրցաւ ծուռ մեկնուիլ։ Անո՞ր համար որ ինք... գորգի վաճառական է։ Բայց Աղա Յովսէփ Իզմիրեանց ալ մուշտակի վաճառականութիւն ըրած էր երբեմն։ Եւ այն ցուրտ ու խոնաւ եղանակին մէջ ուր մտանք, երկուքն ալ հաւասարապէս օգտակար են, մուշտակն ալ, գորգն ալ։ Կամ, անո՞ր համար, որ Նիւ Եօրքի վաճառականը լրագրի յօդուած կ'ուզէր, զոր ամէն ոք կարդաց, մինչ Աղա Յովսէփ Իզմիրեանց գիրք կը պահանջէր, որուն երեսը տեսած չունինք։ Կամ, անո՞ր համար, որ Նիւ Եօրքի վաճառականը նաեւ գրիչ կը գործածէ հրապարակի վրայ, մինչ մեր ամէնէն հոգակաւոր հարուստներն ու մեծատուններն

որոնք մէջէկ կերպիւ անուն թողեր են աղ-
գին մէջ՝ ինչպէս Պէղծեան Ամիրա, Կարա-
պետ Ամիրա Պալեան, Տատեան Պէյերը, Ա-
ղա Յովսէփ Իզմիրճեանց, Աղա Սանասար-
եանց, Յովհաննէս Լստեան, Գարակէօզ-
եանք, եւ այլք, առդ մը բան չեն գրած չեն
տպած երբեք:

«Առարկողներ ալ եղան թէ «Ի՞նչ է այս
յօդուած. յօդուածի վրայ, էջեր կը լեցուին
միւսնոյն խնդրոյն վրայ:» — Ասոնք ալ արդի
Լրագրութեան մէկ ուրիշ երեւոյթէն անտեղ-
եակներն էին: Բացէք Բարիզի, Լոնտոնի,
Պերլինի առաջնակարգ թերթերը, գրական
թէ քաղաքական, և կը գտնէք որ պարբե-
րաբար խնդիր մը կ'առաջարկուի, որուն
վրայ չարաթներով ու ամիսներով ամենուստ
յօդուածներ կը տեղան, մէն մի թիւի մէջ
5—6 սիւնակ նոյն նիւթին քննութեան,
վիճաբանութեան կ'ընծայուի, մինչև որ
խնդիրն իր ամէն կողմերով աղէկ մը վեր-
լուծուի, ծեծուի, լուսաբանուի: Եւ լաւա-
գոյն գրուածները շատ հեղ նաև գրամական
մրցանակով կը վարձատրուին, իբր աւելի
խայծ մը, խթան մը գրելու: Իրարմէ ամէ-
նէն աւելի սարքեր նիւթեր են պարբերա-
բար առաջարկուածները, և տրամագծապէս
հակառակ գաղափարներ օրերով քով քովի
կուգան շարուիլ նոյն էջերուն մէջ»:

Ու շարունակելով շարքը իր տեսու-
թեանց, Քիւզաճէիդն կը յիշատակէ անգլիա-
կան ու ֆրանսական կարեւորագոյն թերթե-
րու մէջ բացուած մրցումներն ու նիւթերը,
եւ գրամական տեսակէտին վրայ ալ ողջմտո-
րէն խօսելէ ետքը՝ կը յանգի այն եզրակա-
ցութեան թէ «Հակալքողական յօդուածնե-
րուն մէջ ինչ որ գիտապէս ճշմարիտ և փոր-
ձառապէս չինիլ ու բարոյացուցիչ էր, ան-
շուշտ իր օգտակարութեան բաժինը պիտի
ունենայ ընկերական մեծ չարիքի մը դէմ
մղուած եւ հանապաղ մղուելիք պայքարին
մէջ»:

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ չոր-
րորդ կարգի Մէճիտիէ պատուանշան չնորհ-
ուած է Սէրէզի կայարանապետ Յարութիւն

էֆ. Պասմաճեանի, ի վարձ իր բարւոք ծա-
ռայութեանց: Պասմաճեան էֆ. երկաթուղ-
ւոյ ընկերութեան վաղեմի ու կարող պաշ-
տօնատարներէն է, և կը չնորհաւորենք
զինքը՝ Կայսերական բարձր գնահատման
արժանանալուն առթիւ:

ԾԱՅԵՐ

Վտանգաւոր, կամչոտ սէր մը փրփրոն.
Հատնումի կեանք՝ չը մարելու սահմանուած.
Ո՛չ գոհացում, ո՛չ համբոյրներ հեշտաղգած,
Ո՛չ ալ գգուանքն ըղգացի դեռ մատներուն:

Բորբոքում մը հրայրքներու անսահման.
Միշտ փողփողուն բոց մը անչէջ կարօտի.
Ճաճանչ մը նուրբ ու մշտավառ որ կ'այրի
Սէր մը անջիղ, տարակոյսի, վարանման:

Ամբողջ երազ, ամբողջ ըղձանք ու նախանձ.
Յաջորդական արծարծումը կրակին.

Սահանք մը որ միշտ կը յորդի խօլագին.
Իտէալի ողջակէզ մը սիրախանձ:

Սիրել չըսուի, ո՛չ ալ սիրուիլ տենդագին:
Նայուածքնե՛րն են որ կը գթան իրարու:
Թմրեցուցիչ խոնջութիւն մը ջիղերու,
Խոստումէն վերջ՝ պաղատելով տակաւին:

Ներքնյուզումի տրտմութիւններ անձկալից,
Զօր չես կրնար իսկ բացատրել ոչ ոքի:
Պատանքուած արդէն մեռել՝ թաղձանքի,
Սիրոյ գաղտնիք՝ որուն չլրիմն է հոգիս:
Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵՍՆ.

ԲՈՒՐԱՍՏԱՆ

Շարունակելով «Իրական հիւժախտ»ին վրայ Մասիսի նախորդ թիւով պարզուած տեսութիւնները, Խմբագրութիւնս ինք կըստանձնէ այս անգամ զբաղիլ նորերու բանաստեղծական արտագրութիւններով։ Մէկ կողմէ՝ անիրաւութիւն պիտի ըլլար բոլորովին անտեսել զանոնք, վասն զի ապագայ տաղանդներու նորածիլ բողբոջներ կրնան նշմարուիլ մէջերնին, ու միւս կողմէ՝ անվերապահ հիւրընկալութիւն մը պիտի չփայնէր զանոնք։ Պարբերաբար, գտնուեցան աշխատակիցներ որոնք ստանձնեցին «Նորերու բաժին»ին մշակումը, բայց ամէնքն ալ չատխիստ եղան անոնց նկատմամբ, մանաւանդ ծաղրող ու խայթող։ Միշտ այն կարծիքէն ըլլալով հանդերձ, թէ մեր դպրոցականները, ուսանող պատանեկութիւնը պէտք չէ քաջալերել՝ իր դասերը և ուսումնասիրութիւնները թողլով, ոտանաւոր գրելու զբաղիլ, որ սիրտէն աւելի՝ միտքն ու ժամանակը կը գրաւեն, պէտք չէ սակայն բոլորովին անտարբեր գտնուիլք գրական ու բանաստեղծական կանխահաս հակումներ ունեցողներուն նկատմամբ։ Այսօրուան գրողները, ըսենք հինները՝ եթէ բառը խորթ չի հնչեր, բարոյական պարտականութիւն մը ունին նորերուն կամ նորեկներուն հանդէպ, գրչի ասպարէզին մէջ։ Եւ թողլով որ, Տիկին Զապէլ Նսայեանէն ետք՝ Ենովք Արմէն ալ զբաղի գեղեցիկ սեռի «Նորեկներ»ովը, — իբրեւ այժմէութիւն, — մենք ձեռք պիտի առնենք՝ «Բուրաստան» խորագրին տակ, բայց ոչ ... մանկանց՝ մեր սեռակից պատանիներուն ու երիտասարդներուն բանաստեղծութիւնները, ընտելադոյնները երեւան բերելով ու անյաջողութեամբ վրայէն թիթեւ գիտողութեամբ մը կամ լռութեամբ անցնելով։

Այս շարժումն հունձքերնիս առատ չէ, բայց համեմատաբար՝ լաւագոյն տեսակէ։ (Առեւտրական տեսութիւններն այնքան ողողած են լրագրական հրապարակնիս, որ անոնց ոճին կը վարժուինք ակամայ՝ նոյն իսկ

բանաստեղծական նիւթի մը մէջ ալ)։ Կեդրոնական վարժարանի աշակերտ մըն է որ երկու ոտանաւոր կը շրկէ մեզ, դողահար մատներով գրուած նամակի մը մէջ ներփակած։— «Մասիս չատ մը նոր գրողներու ապաստանն ու քաջալերութիւնը եղած է և «քաջորդ է ինձ յուսալ որ նոյն հիւրընկալութիւնը չպիտի զլացուի նաև ինձ»։ Մեծ յաւակնութիւն մը չունի այս տղան և կը փափագի միայն որ իր ներփակած գոյգ մը բանաստեղծութիւններէն գոնէ մէկը հրատարակուի։ Առանց իր համեստ ու քաղաքավար նամակին ալ, ուշադրութիւննիս պիտի գրաւէին արդէն իր ոտանաւորները, որոնք՝ բաւական յաջող յանգեցով, մաքուր աշխարհաբարով և ծայրայեղօրէն զգայուն, բանաստեղծական դրոշմ մը կը կրեն և ապագայ կը խոստանան։

Առնենք անոնցմէ մէկը, յաջողագոյնը, որ սիրահալ հոգի մը կը մատնէ կանուխէն...

Ի Ղ Զ Ս

Երբոր տեսնես աչքերս հուրքոտ, հմայքոտ, Երբոր անոնք անշէջ բոցով մը վառին, Տարփատենչիլ թաց համբոյր մը դուն դիր հո՛տ, Զիս մասնակից ըրէ՛ սիրոյդ նեկտարին։

Երբոր տեսնես յայտերս անգոյն ու տրտում, Արցունքէն՝ թաց, ցաւերէն ալ խորշոմած, Երբոր լըսես հոգւոյս անեղ դղըրդում, Նայուածքովդ բուժէ՛ սիրտս ալ մթամած։

Ճակատըս երբ տեսնես տըխուր, դալկահար, Հոգւոյս խռովքն ալ դուն զննէ՛ ուշադիր, Համբոյրդ լոկ բուժէ սրտիս վէրքը յար, Շրթո՛ւնքներդ դալկոտ ճակտիս վրայ դիր։

Երբոր լսես սրտիս զարկը բաբախուն, Երբոր հոգիդ ըզգայ անհուն իմ կսկիծ, Թովանքներուն համակ սրտիդ քու անհուն, Դժբաղդ հոգիս անոնց ըրէ՛ մասնակից։

Իսկ թէ մոռցա՛ր սիրոյս հմայքը նախկին, Մոռցի՛ր, փոյթ չէ. սէրն է արդէն մոռացօն, Լկ վերջ մը դիր հոգիս պրկող տանջանքին. Համակ սուգի կաթիլ մ'արցունք թափէ՛ հոն։

Այս զգայուն ու գեղեցիկ ոտանաւորին դեռաւոր հեղինակը եթէ յստակօրէն դրած չըլլար, իր ստորագրութեան վերեւ, «Կեդ- շոնականի սաներէն» մակագրութիւնը, դժ- ուարաւ պիտի հաւտայինք թէ դպրոցական աշակերտ մըն է անիկայ: Եւ եթէ չենք հրա- տարակեր իր ստորագրութիւնը, պարզապէս խնայելու համար է իրեն՝ կծու յանդիմա- նութիւն մը իր ուսուցիչներէն ու տեսչու- թենէն, թէ ինչպէ՞ս կը համարձակի «սի- րոյ» խօսք ընել այսքան կանուխէն և խնդրել կոյսէ մը որ «դալկոտ շրթունքները իր ճակտին վրայ դնէ»: Եւ սակայն բացառ- րութեան ձեւերը այնքան նուրբ ու գողտ- րիկ են, որ պիտի ներուէր իրեն՝ այս- քան յանդիմութիւն մը՝ բանաստեղծական քօղի տակ:

Կերեւակայէ՞ք հիմակուց զայրոյթը Կեդ- շոնականի խնամակալ—ուսուցիչ Յովհաննէս էֆ. Մուրատեանի, որ կարդալով Մասիսի այս տողերը, երկուշաբթի առաւօտէն պըր- պտուքի մը սկսի դաստարաններուն մէջ՝ երեւան հանելու համար այս սիրային «Իղձ»ին հեղի- նակը՝ որ լաւագոյն բան մը ըրած պիտի ըլ- լար,—իր տեսութեամբ՝ թէ և սխալ ու անի- րաւ չըլլայ ան,—չափական գիտութեանց ու աշխարհագրութեան դասերուն մէջ յառաջ- դիմել ըզձալով: Պիտի ըսէինք, այդ պատ- ուական դաստիարակին, թէ միակ ոչխարի մը երեսէն՝ ամբողջ հօտը չի մոլորի, և թո- ղէ՞ք որ այս պատանին ալ մղում տայ իր գրական ու բանաստեղծական ճաշակներուն. թերեւ, միեւնոյն ժամանակ յաջողակ մըն է ուսմանց և գիտութեանց ճիւղերուն մէջ, վասն զի լսած ենք թէ լաւ չափագէտները՝ լաւ բանաստեղծներ կրնան ըլլալ երբեմն: Դաբրիէլ Ներշապուհ, իր յառաջացած տարի- քին մէջ, ստանաւոր գրել փորձեց, և Յով- սէֆ էֆ. Եղսուֆեան, մաթէմատիկի առաջ- նակարգ ուսուցիչը, դպրոցին մէջ ոտանաւոր կը գրէր:

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՍՍԿԸ

Ժողովուրդը գրեթէ առ հասարակ սա- կարծիքը ունի թէ օրուան բոլոր տեւողու- թեանը մէջ, առաւօտուն կամ երեկոյին. մարդկային հասակը կայուն վիճակ մը ունի: Սակայն ըսենք որ, այս կարծիքը սխալ մը կամ պատրանք մըն է լոկ մտքերու:

Մարդկային հասակը, ճիշդ մարդկային ծանրութեան պէս, փոփոխութեանց կ'են- թարկուի: Ամենքս ալ գիտենք որ, մարդ մը երբ ճաշէն վերջ կ'ընուի, ճաշէն առաջ ունեցած ծանրութենէն բաւական աւելի կը կշռէ: Նոյնպէս եթէ մէկը շատ աշխատի, շատ յոգնի, ասդին անդին շատ վազվաւտէ, իր բուն ծանրութենէն բաւական բան կը կորսնցէ. մէկ խօսքով՝ կը թեթեւնայ: Ինչ- պէս կը տեսնուի, մարդուս ծանրութիւնը օր- ուան մը մէջ փոփոխութիւններ կը կրէ եւ այս յայտնի, անժխտելի իրողութիւն մըն է: Ճիշդ մարդկային ծանրութեան պէս, մարդ- կային հասակն ալ օրուան մը մէջ փոփո- խութեանց ենթակայ է:

Տօքթ. Էտմօնի նոր հնարած մէկ գործի- քովը եթէ կարելի ըլլար մարդուս հասակը օրուան տարբեր ժամերուն մէջ չափել, օրի- նակի համար, առտուն դեռ անկողնէ նոր ելած պահուն եւ իրիկունն ալ պառկելու ժամանակ, այն ատեն պիտի տեսնուէր թէ մարդուս հասակին վրայ փոփոխութիւն մը առաջ եկած է: Մարդուս է՛ն բարձր հա- սակը օրուան մը մէջ, կէս օրէն չորս ժամ առաջ է. իսկ ամէնէն կարճ հասակը՝ կէս օրէն ութը ժամ վերջը: Իրարմէ ունեցած տարբերութիւնը մէկուկէս սանթիմէթրի չափ հաշուուած է: Մարդկային հասակը, աշխա- տութիւններու համեմատ ալ փոփոխութիւն- ներ կը կրէ: Այն մարդիկը՝ որոնք քիչ կ'աշ- խատին ու միշտ նստուկ կեանք մը կ'անցը- նեն, ամէնքն ալ իրենց հասակին բարձրու- թենէն բան մը կը կորսնցնեն: Ընդհակա- ուակը, անոնք որ չափէն աւելի շատ կ'աշ- խատին, շատ կը քաշեն, ոտքի վրայ շատ կը

կենան, անոնք ալ օրուան մէջ, բուն հասակէն վեց միլիմէթրի չափ կորուստ մը կուսնենան :

Զինուորները, օրինակի համար, որ պատերազմի ատեն բնականէն աւելի շատ եւ արագ քաշելու հարկադրուած են, եթէ ու է ճակատամարտէ մը յետոյ կշռուին, պիտի տեսնուի որ հասակին բաւական կարծցած է : Վերջին դուսեւծաբոնական պատերազմի պահուն քանի մը գիտուններ այս մասին բաւական փորձեր կատարեցին : Ամերիկեան բժիշկ մը, Տոքթ. Սէման, ինչպէս նաեւ ուրիշ ոչ նուազ կարող բնախօս մը՝ Տոքթ. Սիմս, եւ այլ ձեռնհաս գիտուններ այս մասին շատ աշխատած են և կարեւոր արդիւնքներ ձեռք բերած :

Ինչու արդեօք մարդու հասակը փոփոխութիւն կը կրէ չափազանց գործունէութենէ մը վերջ : Ինչ է ատոր բուն պատճառը : Կարեւոր հարցումներ են ասոնք :

Առանց երկար բարակ ծանօթութեանց մէջ մտնելու, հակիրճ կերպով ըսենք որ, երբ մարդու մը մարմինը ու է պատճառաւ կը յոգնի, կը կքի, անիկա այլեւս կը սկսի վատնել իր բոլոր ճարպերը եւ հիւթերը, իր ունեցած կռիւնները իրենց առաձգականութիւնը եւ շարժական գործարանները զօրացնող նեարդային եւ ճարպային բարձրիկները իրենց կարծրութիւնը կը կորսնցնեն. ասոնցմէ զատ, եթէ քունն ալ կանոնաւոր չըլլայ, այն ատեն բոլոր ասոնք իրարու միացած պատճառ կ'ըլլան հասակին իսկական բարձրութեան նուազման :

Տոքթ. Տիւրան կ'ըսէ թէ երբ հեծելանւորդ մը երեսուն քիլոմէթրի չափ տեղ կտրէ օրուան մը մէջ, երկու սանթիմէթրի չափ հասակէն կորուստ կ'ունենայ : Տղայ մը ծնած պահուն 490-510 միլիմէթր երկայնութիւն ունի միջին հաշուով : Առաջին տարին հաղիւ քսան սանթիմէթրի չափ կը մեծնայ. հետեւապէս իր ամբողջական աճման հետ բաղդատմամբ՝ զրեթէ 1/16ը ցոյց պիտի տայ : Երկրորդ տարուան մէջ, տասը սանթիմէթրի չափ կը մեծնայ և 4-5 տարեկանէն սկսեալ մինչեւ չափահասութեան. տա-

րիքը, տղու մը աճումը ամբողջականին հետ բաղդատելով 1/3ը ցոյց կուտայ : Բացառաբար, վաղահաս եւ յապաղած աճումներ տեղի կ'ունենան : Ընդհանրապէս մանչերը 11-12 տարիքներուն՝ աղջիկներէ աւելի խոշոր, աւելի հասակաւոր եւ աւելի ծանր կըլլան : Բայց այդ տարիքէն սկսելով՝ աճումը իգական սեռի մէջ աւելի արագ կ'ըլլայ եւ կը տեւէ մինչեւ որ 15 տարու ըլլան : Այդ տարիքէն ետքը՝ մանչերը նորէն աղջիկներէն աւելի շուտ կը մեծնան, մինչ այս վերջինները այլեւս կայուն վիճակ մը կ'ունենան : Այրերու համար 25-30 տարիքը, եւ աղջկանց համար՝ 22-26 տարիքը ծայրագոյն սահմանը նկատուած են :

Տոքթ. Ռիպմոն-Տէսէն իր ծննդաբերութեան նուիրած ստուար հատորին կարեւոր գլուխներէն մէկին մէջ այս խնդրին նկատմամբ բաւական ընդարձակօրէն խօսելէ յետոյ, ի մէջ այլոց, ըսած է. — «23 տարեկան աղջկան մը եւ 30 տարեկան մանչու մը միջեւ կնքուած ամուսնութիւնը միայն գիտական ամուսնացում կրնայ սեպուիլ, եւ պէտք է որ ամէն մարդ այդ գիտական ամուսնացումին հետեւի, ըստ որում այն ատեն է որ ապագայ սերունդները փոխանակ տխրոյ, ապուշ, լուսնոտ ըլլալու՝ զօրաւոր, կայտառ, հուժկու պիտի ըլլան, ևն. ևն. » : Հմուտ կնախտարոյժը շատ երկարօրէն խօսած է ամուսնական այդ կէտերուն վրայ, բայց մենք մեր բո՛ւն նիւթէն չեղած կ'ըլլանք կարծեմ, եթէ անոնց վրայ անդրադառնանք :

Մարդկային հասակը 25էն մինչեւ 50, կայուն վիճակ մը ունի. բայց 50էն, երբեմն 60էն յետոյ ալ տակաւ կը սկսի կարճնալ : Աւելցնենք նաեւ որ հասակի այդ կարճնալը բնա՛ւ առնչութիւն չունի ողնայարի կորութեան հետ, նոյն իսկ կաշմբուռն եւ բարձր հասակի տէր եղող ծերերուն վրայ, որոնց ողնայարը ուղիղ է, հասակի այդ նուազումը տեսնուած է : Ինչ որ ալ ըլլայ սակայն, սա ակնբերեւ է թէ մարդ մինչեւ իր խոր ծերութեան, իր բուն հասակի բարձրութենէն 4, 5էն մինչեւ 8 սանթիմէթրի չափ կորուստ մը կ'ունենայ :

ԱՅՆԱՆԱՅԻՆ ԽՈՂԵՐ

(ՍԻՐԵՐԳ)

Իրիկուններն ես կը խոկամ ,
Ամայութեան երգը կ'անցնի
Պատուհանիս երբ առջևէն ,
Անկապ ձայներ զիս կը թովեն ,
Հոգւոյս մէջէն մերթ Աշունի
Կ'անցնի յանկարծ ուրուն տարտամ :

Դիչերն համբուն ես կ'երազեմ
Ցաւը կեանքի Աշուններուն ,
Ու շամբուչ հովիւ՝ որ կը տանի
Դէպ ի տամուկ խորչեր նըսեմ
Գօս տերեւի տեսիլն աղփուն
Որ օդին մէջ կը տատանի :

Եւ ցուրտ այգուն միշտ կը դիտեմ
Պարուտակը մըշուշներուն ,
Զոր գիչերուան մութ ստուերներ
Թոյլ միջոցին մէջ են ձգեր ,
Դառնութեան մը պէս մոլորուն՝
Զոր կրած է Սէրն հոգւոյն դէմ :

Բայց թափառիլ կ'ուզեմ ընդ միշտ ,
Մառախուղին ու հովուն դէմ ,
Ու դաշտերուն մէջ ամայի ,
Ուր աչքն անով միշտ կը նայի :
Դիտել՝ տօգոյն ու դալկադէմ
Տերեւներուն տամուկն ու վիշտ :

Հողիս հիմակ յափրանքն ունի
Սիրոյ խանդ ու հըրայրքներուն ,
Ու ծաղկալից եղկ ջերմութեան
Վայելքէն վերջ բաղմարութեան ,
Կ'ուզէ մըշուշն այս օրօրուն ,
Ու ցրտագին զովքն Աշունի :

ՄԻՍԱԿ ՄԵՏԱՐԵՆՑ

30 Սեպտ. 1904

ՄՈՒՔԻՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

ՃԱՌ Պ. ԲՕԼ ՏԷՇՈՆԵԼԻ

Պարոններ ,

Կը յիշե՞ք այն խօսքը , որով Ռենան սկսաւ Մօնթիօնի մրցանակներուն վրայ իր ճառը . «Ճարիրն մէջ կայ օր մը՝ ուր առաքինութիւնը կը վարձատրուի» : Կարելի էր ըսել նաեւ . «Ճարիրն մէջ կայ օր մը ուր պէտք է մենք ինքզինքնէս վեր բարձրանանք , ապրելու համար անոնց հետ որոնք ամէն բանէ գեր ի վեր կը կարկառին» : Այո , բանաստեղծն ու արուեստագէտը , որոնք գեղեցիկը կը ստեղծեն , քաղաքական մարդը , որ ազնուական երկիրի մը ուժը աճեցնելով , աւելի արդարութիւն կուտայ մարդոց , գիտունը ու փիլիսոփան , որոնք ճշմարիտը կը փնտռեն , դէպ ի կատարելութիւն առաջացողներու ճամբուն մէջ , անձնազոհութեան ու սրբութեան նուիրուած էակէն վերջը կուգան :

Առաքինութիւնը կը գերազանցէ միտքը , ինչպէս միտքը կը գերազանցէ նիւթը : Նիւթը չի ճանչնար բնաւ միտքը . և խելքը , ինքնին , պիտի չկրնար արտադրել բարոյական մեծ ճշմարտութիւնները . ինքզինքը տալու համար չի բաւեր ամէն բան հասկնալ :

Անշուշտ , ազգականութիւն կայ մեծ մը . տածումի մը ու գեղեցիկ գործի մը միջև . այլ սակայն , ամէնէն ազնուախոհ ու նշանաւոր առածն անգամ չի կրնար համաճարակ մը բուժել , կամ յուսահատ կացութեան մէջ գտնուող նաւ մը կորուստէ ազատել . ան կը հրաւիրէ միայն գօտեպնդիլ ու դիմադրել վտանգին , ինչ որ արդէն առաջին պայմանն է յաղթելու համար անոր . բայց որոշ անջըրպետ մը կայ անշուշտ բարիքն ու արդարութիւնը յղանալուն և անոնցմով ապրելուն մէջ . սկզբունքն այն ատեն միայն կը ստանայ իր բովանդակ արժանիքը , երբ կ'իրագործուի , կիրառութեան կը դրուի :

Եւ ես , հոս չեմ խօսիր այն բարոյախօս

ներուն վրայ որոնք առաքինութիւնն ուրիշներուն համար միայն կը սիրեն , ուրիշներուն վրայ տեսնալ կ'ուզեն , որոնք անոր վրայ խօսած ատեննին յայտնի կ'ընեն իրենց խզճի խայթը , և անոր հետ կը վարուին ինչպէս Մանօն Լէսքօ կը վարուի իր սիրայրին հետ , աւելի խանդակաթ դառնալով երբ կը խորհի առջի օրուան իր անհաւատարմութիւններուն , և ա'լ աւելի գորովագին հանգամանք մը տալով իր գգուանքներուն , երբ ան կը պատրաստուի նոր անհաւատարմութիւններ գործելու :

Դիտեցէ՛ք սա զմայլելի էակները , զորս ժողովրդային երախտագիտութիւնը երեւան բերած է մեր առջև . ինչ որ իմաստուններուն խոկմունքը , ամենավեհանձն ու ամենափափուկ սիրտի տէր խորհողներու անդուժգունքը , ու հոգեկան կեանքի կատարեալ ու անգերազանցելի գիտութիւնը յղացած են ամէնէն աւելի սխրալի , այդ իրենց ամէն օրուան , ամէն ժամու կեանքն է արդէն : Արհամարհելով կեանքի բարիքները , ճոխութիւնները , պատիւները , հաճոյքները , ինքզինքնին ամբողջովին նուիրելով ուրիշներուն բարիքին ու օգտին , անոնք մէկ հարուածով կ'իրագործեն ամէնէն մեծ հոգիններուն երազը . ամէնէն չողչողուն ու իմաստուն առածները կը տոգունին անոնց մօայլ կեանքին քովը , և մեք հոս , նոր վկայութիւն մը կը գտնանք Մօնթէյնի այն խօսքին թէ միամիտ տգիտութիւնն ու ամենակատարեալ գիտութիւնը երբեմն իրարու կը հանդիպին ճշմարտութեան մէջ :

Ֆրանսայի գլխաւոր Կաճառն իր բովանդակ ճակատագիրն ի գործ դրած չպիտի ըլլար , եթէ տեսլականին ծառայողներուն մէջէն անտարբեր գտնուէր անոնց նկատմամբ որոնք լաւագոյններն են արդարեւ իտէալին հետապնդողներուն . մեր գործը թերի պիտի ըլլար , եթէ որոշ օրեր , դժնդակ արահետներէ չերթայինք , տառապանքին , հիւանդութեան ու մահուան մէջ փնտռել անձնութեան դալկահար ծաղիկները , անոնցմով պսակ մը հիւսելու համար ֆրանսական հայրենեաց ճակտին :

Բայց ո՞վ ենք մեք, աստիճաններ նշա-
նակելու համար հոգիներու դասակարգու-
թեան մէջ: Եւ ի՞նչպէս ընտրել:

Մարդիկն աւելի իրենց զգացումներէն
պէտք էր դատել քան իրենց գործերէն:
Ինչ որ կարեւոր է, գործելու մղող շարժա-
ռիթն է, թաքուն զսպանակն է. ինչ որ շա-
հագրգուական է, ներքին տագնապն է,
պայքարը, գաղտնի մնացած յաղթանակը:
Այն որ բնաւ նեղը չէ մնացած, չէ սխալած,
ան չէ առաքինի. այն որ ինկած է, սխալած
է, կրնայ ըլլալ որ տակաւին առաքինի եղած
ըլլայ: Առաքինութիւնը կուտիւն է չարիքին
դէմ: Ոչ ոք կրնայ ըսել թէ Աստուած ա-
ռաքինի է, ինչու որ Ան՝ ի բնէ՝ բնականօ-
րէն բարի է:

Մնաց որ, ճշմարիտ առաքինութիւնը կը
թաքնի միշտ. կը փախչի լոյսէն. ան կը
փողփողի մթութեան մէջ, ինչպէս շուշանը
մռայլամած անտառին մէջ:

Եթէ գրական գեղեցիկ արտադրութիւն
մը կը բաւէ մատնանիւ ընելու համար հան-
ճարը, գեղեցիկ գործ մը չի բաւեր առաքի-
նութիւնը իրականացուցած ըլլալու համար:
Քաջութիւնը, դիւցազնութիւնը, տառա-
պանքը, ու նոյն իսկ կեանքի զոհաբերու-
թիւնը կրնան վայրկեանի մը գործ ըլլալ. —
առաքինութիւնը տեւականութեան մէջն է:

Սրբանուէր կենցաղի մը մէջ, ո՞րն է եր-
եւակայութեան կատարած գործը, որն է բա-
նականութեան ազդեցութիւնը, ո՞րն է խան-
դավառութեան բաժինը, որն է կամքի բա-
ժինը: Ո՞րը պէտք ենք նախամեծար համա-
րել. մարդուն քաջութիւնը, որ սուր գի-
ծերով ու սլացումներով կը ժայթքէ և ամէն
բան կը լուսաւորէ, թէ կնկան երիտասար-
դութիւնը ու գեղեցկութիւնը, որոնք ամ-
բողջովին կը փճանան ուրիշին չարիքին մէջ,
նողկալի այն վարակումին մէջ, որ բերանդ-
ունգունքդ, աչքերդ կը կրծէ:

Կարգ մը էակներու համար վայելքը անձ-
նութիւնութեան մէջ է միայն. և արդարեւ ա-
նոնք որ ինքզինքնին կը մոռնան, ախուր
ըլլալու մէկէ աւելի պատճառէ խոյս տուած
կ'ըլլան. Գողգոթան նուազ դժնդակ է, երբ

մարդ ուրիշներուն խաչն է որ կը կրէ: Այն
ատեն, առաքինութիւնը ինքնին, իրեն սեպ-
հական կէտ նպատակին է, իր վարձատրու-
թիւնն է: Ուրիշներու ալ համար, անիկա
յաւիտենական վարձատրութիւն մը ստանա-
լու միջոց մըն է: Բայց ի՞նչ վարձատրու-
թիւն: Անտարակոյս դեռ ուրիշ բարիքներ,
միշտ աւելի շատ բարիքներ ընելու կարող
ըլլալն է այդ վարձատրութիւնը: Անոնք
ինքզինքնին կուտան, անհունութիւնն ստա-
նալու համար: Ի՞նչպէս աշխարհային չափե-
րով գնահատել այդ կեանքերը՝ որոնք ամ-
բողջ երկնային բաներով են աւելի:

Ահ, եթէ խօսքիս մօտիկ կ'ընէք, եկէք
գոհանանք ժողովելով միայն, վճիտ ու ա-
նարատ այն կոհակները որոնք մեծաբերձ
կատարներէ կուգան, առանց ջանադիր ըլ-
լալու գտնալ այն աղբիւրները՝ որոնցմէ կը
ժայթքին անոնք: Եւ եթէ նմանօրինակ բա-
րոյացուցիչ յոյսերն անուրջներ են, օրհնեալ
թող ըլլան այն անուրջները, որոնք վսեմ
իրականութիւններու ծնունդ կուտան:

Ինչ որ սակայն տարակոյս չի վերցնե՞ր՝
սա է որ առաքինութիւնը յոգնեցող չ'է՝ կեր-
պով միօրինակ չէ բնաւ: Այնպէս կարծող-
ներն ու զրուցողները դիտած չեն զայն մօ-
տէն, ոչ ալ երկարօրէն: Բարոյական աշխարհ
հը շատ աւելի զանազանալից է ու պէսպիս
սագեղ քան ֆիզիքական աշխարհը: Առա-
քինութիւնն ալ մոլութիւններուն ու նեն-
գամտութեան պէս ունի իր գերանբռութիւն-
ներն ու վայելչանբռութիւնները: Այնչափ
եղանակ կայ սփոփելու, մխիթարելու՝ որ-
չափ եղանակ կայ տառապելու, և այնչափ
երանդ կայ բարեգործութեան մէջ՝ որչափ
կայ վիշտին մէջ: Յանցանքն այդ հերոսնե-
րո՞ւնն է, եթէ հիմա հոս հարկադրուած ենք
մենք, քանի մը տողերու մէջ խտացնել ի-
րենց պաշտելի կեանքերը: Կիրքերու ու
հրապրանքերու ո՞ր նկարագրութիւնը պիտի
կրնար դիմանալ այդօրինակ բաղդատութեան
մը և այդ տեսակէտով ի՞նչ պիտի արժէին
Քուզին Պեդրը, Դաւուս գաւկի մը խոստո-
վանքները, Գամելիազարդ Տիկիները, Եւ յետոյ,
հրաշակերտներու երկարաշար թանգարանի

մը մէջ չուտ կը յոգնի մարդուս աչքը . ատոր յանցանքը նկարիչներունն է . թէ մեր տեսողութեանը :

Ասոր հետ մէկտեղ , տասնեութեան դարու մարդիկն այս մրցանակները երեւակայելով ու հաստատելով , ճիշդ ու խորունկ գաղափար մը յղացած եղան : Կը յիշէք Ջասկը և Բաբելոնի տօնախմբութիւնը , կը յիշէք նաև ինչ որ Տիարօ քանի մը տարի վերջը կը գրէր Օր . Վօլանին .

«Եթէ բարի գործերը նկատողութեան առնուէին , ա՛լ աւելի պիտի չատնային անոնք , ապահով եղէք , կ'ըսէր ան : Չինաստանի մէջ ալ այդպէս է որ ըրած են . հոն , այդ տեսակ գործերն ի ձայն փողոյ կը հռչակեն . հոն անոնք ապահով վարձատրութիւնները ունին իրենց : Մենք պատժել միայն գիտենք . մենք չարերը կը ձերբակալենք որչափ որ կրնանք , բայց չենք ջանար բարիներ սերմանել ու հասցնել . եթէ մրցանակներ ըլլային առաքինութեան համար , ա՛լ թերեւ պէտք չըլլար պատիժներ տնօրինել ոճիրին նկատմամբ : Չարիքը կը գործեն ընդհանրապէս չափու համար . նոյն շարժառիթով առաքինութիւնը կիրարկել ոչ ոք պիտի մերժէր , ինչ որ աւելի ապահովութիւն ու պատիւ պիտի բերէր իրեն հետ : Հոն ուր ոսկելից քսակ մը կուտան բարեգործ մարդուն , հոն գողութիւն չի պատահիր այլևս» :

Չեմ կարծեր որ Պ . Մօնթիօն , որչափ ալ հեռատես և ուղղադատ ըլլար , միքտէն անցուցած ըլլայ երբեք տեսակ մը ապահովագրութիւն հաստատել չարիքին դէմ , ոչ ալ կը հաւատամ որ առաքինութեան յատուկ վարձատրութիւններ ընծայել ուղած ըլլայ , ինչու որ հողիին վերաբերող բաները գին չունին բնաւ . բայց անտարակոյս , աննպատակ , դատարկ ու անիմաստ կը գտնար , հիմնալ մարդկային զգացումներու ու գործերու գրական արտայայտութեան վրայ , և չհիսնալ անոնց վրայ բուն իսկ կեանքի մէջ . ան կը խորհէր որ միտքերու մշակումը կարելի էր նաև ի գործ դնել , գիրքերէն բոլորովին տարբեր եղանակով մը , և միտք կը յոգ-

նեցնէր ներքին կատարելագործումին համար , այնչափ՝ որչափ ընդհանուր կատարելագործելութեան համար՝ որուն այնքան հեշտ է անձնատուր ըլլալ : Աղքատ բարեգործներուն , իրենց բարերարութիւնները շատցնելու միջոցը տուաւ ան . հարուստներուն տուաւ դրամը պատիւով պատուաստելու ազնուականացնելու միջոցը . գրագէտներուն ու զարգացածներուն , բարքերը մաքրելով , միտքին առաջդիմութիւններուն ծառայելու միջոցը տուաւ . վերջապէս , Յրանսային ու մարդկութեան աւելի զօրութիւն տուաւ . ինչու որ գեղեցիկին տեսքը , որ չի ծերանար , լաւատեսութիւն կը սփռէ , եւ լաւատեսութիւնը նոր գեղեցկութիւններու ծնունդ կուտայ . ան կը զարգացնէ բարեացակամութիւնը , եւ բարեացակամութիւնն արդարասիրութեան մէկ մասը կը կազմէ :

Այս տարուան ձեր ընտրեալներուն մէջ , պարոններ , նախ եւ առաջ կը գտնամ գթութեան քոյր մը եւ ուսուցչուհի մը : Գթութեան քոյրն ուսուցչուհի մըն է . ուսուցչուհին գթութեան աշխարհական քոյր մըն է : Կրօնաւորուհին գրաւած է նոյն ինքն լայնախոհներուն , հաւատք չունեցողներուն սիրտը , եւ ուսուցչուհին գրաւած է հաւատացեալներուն համակրութիւնը : Իրենց առաքինութիւնը կուսակցութիւններէ ու ղանդներէ գեր ի վեր բարձրացուցած է զիրենք :

Մայրապետը դեռ իր կոչումին չծառայած , կը կոչուէր Ժիւլի Հարդման : Բօլմարի վարչային շրջանակին մէջ , Սէնթ-Մարի-օ-Մին գիւղը ծնած է ան 1830ին , համեստ մշակներու ընտանիքի մը մէջ : Մայրապետութեան եւ ուսուցչութեան ջերմ փափաք ունէր ու կը պատրաստուէր , երբ քսան տարեկանին , որբ մնաց իրմէ աւելի պղտիկ հինգ եղբայրներով ու քոյրերով : Տասնը հինգ տարի չարունակ ինք մայր եղաւ անոնց : Երբ այս վերջինները ամենքն ալ պէտք եղածին չափ զինուեցան կեանքի պայքարին դէմ , ան քոյր տուաւ եւ քոյր է . մէրանսիէն անունով մտաւ Սէն-Ժօէզէֆ տը Բիւլենի մարապետներուն կարգը : 1868ին , ան տեսչուհի անուանուած էր Պօլէի մանկանց-վարժարանին : Երեսունըվեց տարի ան-

ընդհատ, ժողովուրդին զաւակները մեծցուց
ու կրթեց ան հոն: Ատիկա նորէն աղօթելու
եղանակ մըն էր իրեն համար: Իր կուսական
մայրութիւնը պատրաստած պիտի ըլլար զինք
այդ պաշտօնին, եթէ երբեք ինքը եղած
չըլլար այն գերանուրբ հոգիներէն՝ որոնք
սիրտեր վարելու ու գործածելու բնական
ձիրքն ունին:

Այսօր եօթանասունըհինգ տարու է ան:
Իր անբիծ դէմքը նրբացած, բարակցած է.
իր հասակը կամարացած է քիչ մը. ու միև-
նոյն ատեն կարճեցած է իր անունը. ժողո-
վուրդը իր ընտանեկան ու յուզիչ լեզուովը,
քոյր Emérentienne-ը կը կոչէ «Mère An-
cienne» «Հնաւուրց Մայր» եւ արդարեւ,
ճշմարիտ մայր մըն է ան, գոր իր գորովան-
քով խնամած երեք սերունդները, հիմա հա-
ւասար գորովանքով մը կը խնամեն ու կը
մեծարեն:

Պօվէի բնակիչները, որոնք ժամն Հաչէ-
թէն ի վեր լաւ կը ճանչնան կանացի արժա-
նիքը, կը սիրեն ու կը մեծարեն Ալգասուհին՝
որ Յրանսան ընտրելով հանդերձ իրեն բնա-
կավայր, պահած է իր ծնած երկրի՝ շէշտը:
Եւ հոն, սահմանադրութիւն անդիի կողմը,
այն եղբայրներն ու քոյրերը զորս ինք մեծ-
ցուցած է ատենով, զորս վերտեսած չէ
այնչափ տարիներէ ի վեր, եւ անոնց զա-
ւակները զորս իրենք կը մեծցնեն հիմա ի-
րենց կարգին, գոհ պիտի մնան մեր մատու-
ցած յարգանքէն: Կրօնաւորութիւն չէ որ կը
պատուենք ու մրցանակի կ'արժանացնենք
մենք այսօր. կրօնաւորութիւն իր քօղը միայն
կ'ուզէ ունենալ. հակառակ պարագային, ան
թերացած պիտի ըլլար իր կրօնական կարգին
ոգիին: Ուրիշ ինչ ըրած է ան, եթէ ոչ գոր-
ծադրել Գթութեան Դուստրերու կանոնադ-
րին սա յօդուածը. «Անոնք յիշելու են որ
պէտք է միշտ աղքատներուն ծառայութիւնը
նախամեծար սեպել իրենց կրօնական պար-
տաւորութիւններէն, խորհելով որ այդպէս
ընելով, անոնք հեռացած կ'ըլլան Աստուծ-
մէ, նորէն Աստուծոյ մօտենալու համար,
եւս աւելի»:

Ինչ որ կը տեսնանք մենք այդ մարապե-
տին վրայ, քաջարի այն որդեակն է որ ըն-
տանեկան բոյնը փրկած է, ժողովրդային

բարեմոյն այն ուսուցչութիւն է, որ դժբախտ-
ներուն օգնութեան կը փութայ յարաժամ,
այն Ալգասուհին է վերջապէս, որ Յրանսուհի
է մնացած միշտ: Ալգաս, արդարութեան
պէս անխախտ կը մնաս դուն մեր սիրտերուն
մէջ. անոր պէս մասը կը կազմես դուն բա-
րոյական մեր անունդին, մեր գոյութեան:
Քու սուրբ աղջիկներէդ մէկուն մեծ ու
հզօր առաքինութիւնները հոչակելով, նորէն
Յրանսան է որ պատուած կ'ըլլանք:

Ուսուցչութիւն Տիկին Պուարօնն է, Լիւսո-
նէն (Վանտէ): Քառասուն տարիէ ի վեր մօ-
տաւորապէս, ան ալ ինքզինքը մոռցած է,
ինքզինքէն հեռացած է, ապրելու համար
ուրիշներուն մէջ, պզտիկ տղեկներուն մէջ,
— ինչպէս նաեւ բոլոր հիւանդներուն, բոլոր
վիրաւորեալներուն մէջ. և քանի ախտը
նոդկալի, քանի վարակիչ եղած է, ա՛յնչափ
աւելի սրտագին ու եռանդով ապրած է ան
անոնց մէջ: Ոչինչ ունի ան, և սակայն միշտ
կուտայ անիկա, եւ աղքատները չեն զգար
բնաւ որ բարիք մը կը ստանան, երբ անկէց
է որ կուգայ ան:

Ան կը վաղէ դէպ ի վիշտին կողմը, ինչ-
պէս ուրիշներ կը վաղեն դէպ ի հրճո՞ւտն ըլն,
դէպ ի շողշողուն պայծառութիւններուն,
դէպ ի սիրային վայելքներուն կողմը: Ա-
մէնէն մերժուած թշուառը, որ ամէնուն
համար գարշանքի ու սոսկումի առարկայ մըն
է, խանդաղատանքի առարկայ մըն է անոր
համար. դժբախտ արարածն երկար ու մպե-
ռով կուլ կուտայ, իր բարեբարութիւն երե-
սին վրայէն, այն յոյսը՝ զոր պաշտելի այդ
կիւնը պատրաստած է զրկեալներու սիրտե-
րուն համար:

(Գաբուակելի) Թարգմ. Չիֆթէ ՍԱՐՍԱՅ.

Մ. Խ. — Ձեռնարկած էինք արդէն ամ-
փոփում մը տալու մեր ընթերցողներուն՝
Սոաքինութեան Մրցանակներու վրայ խօսող
այս գրական-իմաստասիրական բանախօսու-
թենէն, երբ տեսնելով անոր ամբողջական
թարգմանութիւնը Խիզանդիոնի մէջ, Չիֆ-
թէ-Սարաֆի կողմէ կատարուած, լաւագոյն
համարեցինք երիտասարդ գրագէտին թարգ-
մանութիւնն արտատպել, որ հաճոյքով կը
կարդացուի միշտ՝ իր հեղինակութեանց պէս:

ԽՄԱՐԱՊԱԿԱՆ ՆՕՐԵՐ

Ազգ. Հիւանդանոցի Գ. Թեւին այն մասը, որուն շինութեան ծախքն ստանձնած են Տեարք Յ. եւ Մ. Յակոբեան, կառուցուելու վրայ է արդէն: Շարժում մէջ սկսաւ նաեւ միւս երկու մասերուն շինութիւնը, որոնց մէկին ծախքն ստանձնած են Պատրիկ էֆ. Կիւլպէնկեան ու Նղբարք եւ Գալուստ ու Գառնիկ էֆ. ք. Կիւլպէնկեան, եւ միւսինը՝ Մաթուս էֆ. Ունեհան:

Անշափահաս տարիքի մէջ կատարուող ամուսնութեանց խնդիրը, որուն վրայ ձեռնհասօրէն գրած էր Տոքթ. Ա. Մեղպուրեան էֆ. Մասիսի նախորդ թիւով, այս օրերս կը շարունակէ դարձեալ զբաղեցնել Պատրիարքարանը: Սղերդի մէջ, մասնաւորապէս, յաճախուէ՛ւ ըլլալով այդ կարգի ամուսնութիւններ, տեղւոյն առաջն. տեղապահին տեղեկագրութեան վրայ՝ Կեդր. Կրօն. Ժողովը որոշած էր յորդորական Կոնդակ մը զրկել: Ս. Պատրիարքը պատրաստած ըլլալով այս Կոնդակը, վերջին թղթաբերով զրկուեցաւ Սղերդ, տեղւոյն եկեղեցիներուն մէջ կարգացուելու համար:

Անցեալ տարի, ամրան վերջերը, մասնաւոր յօդուած մը նուիրելով՝ ծանօթ ուսուցիչ եւ դպրոցական վարիչ Յ. Նիկողոսեան էֆ. ի նորահաստատ երկսեռ վարժարանին (Ի Բերա, Նշան-Թաշ), յոյս յայտնած էինք որ այդ արուարձանին ու շրջակայից ծնողքներուն կողմէ պիտի գնահատուի սոյն կրթական յարկը, ուր կը պաշտօնավարէ նաեւ Տիկին Յ. Նիկողոսեան: Գոհունակութեամբ կը տեսնենք թէ՛ Նիկողոսեան վարժարանը՝ կանոնաւոր շրջան մը բոլորելէ ետք, ներկայ դպրոցական տարեմուտին սկիզբը ընդունած է նախորդէն աւելի շատ թուով աշակերտներ ու աշակերտուհիներ: Բաց ի մանկապարտէզէն, կազմուած են նախակրթարանի վեց դասարանները՝ ուր կը դասախօսուին փոր-

ձառութեամբ եւ խնամով պատրաստուած կրթական ծրագրի մը համաձայն՝ ուսմանց բոլոր ճիւղերը, կարող ուսուցչուհիներու եւ ուսուցիչներու կողմէ:

Նիկողոսեան վարժարանը այս տարի բացած է նաեւ այցելու աշակերտուհիներու յատուկ դասարան մը՝ ուր կ'ընդունուին ձեւագիտութեան, հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն ու գերմաներէն լեզուաց, գծագրութեան եւ ուսման որ եւ է ճիւղի մը հետեւելի փափաքող աղջիկներ:

Այս պայմաններուն մէջ, տարակոյս չի մնար որ Նիկողոսեան վարժարանը որքան կարեւոր բաժին մը ստանձնած է մեր աղջկանց դաստիարակութեան եւ կրթութեան գործին մէջ: Յուսով ենք որ մերազնեայ ծնողքները աւելի լայն սահմանի մը մէջ պիտի ուղեն օգտուի սոյն կրթական հաստատութենէն, եւ քաջալերել անոր Հիմնադիր-Տնօրէնը որ իրօք որ եւ է ջանք եւ զոհողութիւն չէ խնայած ու չի խնայեր, իր հիմնած վարժարանն օգտակար ու արդիւնաւոր հանդիսացնելու, Աղջկանց յատուկ բարձրագոյն Ուսումնարան մը ընելու առաջադրութեամբ:

Սառն Ժողովի չորեքշաբթի օրուան նիստին մէջ, եկեղեցական ու աշխարհական ներկայ անդամները ցաւ յայտնեցին իրենց պաշտօնակցին՝ Սեպուհ էֆ. Տէմիրճիպաշեանի մահուան առթիւ, եւ Ս. Պատրիարքը, յիշելով հանգուցելոյն ազնիւ ձիրքերը ու մատուցած ծառայութիւնները, «Հոգւոց» արտասանեց: Ազր. Պոլսոյ մէջ եւս Հոգեհանգստեան պատարագ եւ պաշտօն մատուցուել է հանգուցելոյն յիշատակին, նախադասութեամբ Տ. Դանիէլ Վրդ. Յակոբեանի որ դամբանական քարոզ մը խօսեր է:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Տէր եւ Տնօրէն—ՏՈՔԹ. ՆԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

CAISSE PATERNELLE

ՔԵՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՊԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.

Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ՖՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ

62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74%, որով ՔԵՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տաւած երաշխաւորութեանէն:

Ընկերութեան վարչական խորհուրդը կազմուած է Ծրանաւորի մէկէն նշանուոր դրամատէրներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ծրանաւորի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիոնէի վարչական խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ, ՏԸ ՖԼԷՌ, Դրանաւոր-նորիք ընկերութեան վարչական խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ, ՏԸ ՍԷՆ ԿԻԼԶԷՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիոնէի.

Թուրքիոյ Տնօրէն Գ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Պօլիս, Սաւթեան-Համամ, Բասաժ Բաթըրճըզլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիոնէի.

ԾԱՆՈԹ. - Շահաւոր դիմել պիտի տրուի այն ֆինիչին որ կաշեւոր արդիւնք մը իր ագործած քլլայ անձնապէս:

4-10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ բօնաֆիլի ապրանց

Մեծ-Շուկայ, Քիւրքճիներու դրան կից, Թ. 41-43

Նոյնպէս, աւելց եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պօլիս, Սաւթեան-Համամ, Միտիլի, Դրամատուն, դէմ Թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Բօնաֆիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յաւուր հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն անկուսութիւն, եւ դիւրամատ-լիւի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հաւորակութեան:

Աղում վարդեան, մեծապէս գն: Թողաւած է իր բոլոր լաւագոյնները:

պէտք է որ Շուկայ, Կլլոզ մէկն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

4-10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարձնէ սառմաքի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին եւ նոր գաղտնիկ անբարեկամութիւնները: Այս վերջին տխուրը՝ առանց սառմաքի խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի միայն որ կէս օրէ վերջը: Զարեկաբար օրերը միայն ճրի: 4-10

“**ፍ ሐ ን ኮ ዩ ሀ**,”



• Անգլ. ոսկի 4,218,000

ՅԻՆԻՔՍ Կ'ապահովագրէ հրդեհի եւ
կոյտակի դէմ մօէն տեսակ տնչարժ եւ
չարժաւն տալցաւածք, յոյժ Զպատաստուոյ
պայմաններով :

2-10

Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԽԵՆ մինչեւ իրիկուան Ժ. 11½

ԲԵ. ԴԵ. Ուր. օրերը ճեն մինչեւ $11\frac{1}{2}$
Կիրակի օրերը ժամադրութեամբ 1—10

1-10

ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԷՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցման բուսակի նիւղեր
VICTORIA ՎԻԿՏՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
DE բոլորական քննութեամբ եւ թէ՛ առանց բոլորական քննութեան
BERLIN Առանց բոլորական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
 Բուն վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կունենան,
 օկտոբ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1904ին Ջր. 1,491,279

Պահեստի դրամ 1904ից » 695,718,000

Հաստատում 1853 թվաթ. 20ին ար-
քայականհրովարակով եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քէ:

ԸՆԿ . ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պանքա
եւ Քրէտի Լիոնէ

Լիազոր. Ընդհ. Ներկայացուցիչ
Ա. Կ. ԼԻԻՋԻՆԱ

Կալաթա, Պերեֆե Խան

Օրհանդ-Պանգի դեմ

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԿԱՆ ԸՆԿ

ZUSUSSEUL I FUR 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	274,000,000	ֆր.
1902ին գանձուած ապահովագին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	129,000,000	ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքնոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻՄԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւոյ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքնոն ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրքիցներէն, որոնք կենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎԵՍՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապս. հովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքըրնը Օղլու

Մասնաճիւղ Ղալաթիա, Լնայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ Ղալաթիա քաղաքաց մէջ

6-10

ՖԵԼԻԲՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՐԾՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԷՆ

ԼԱ ԷՍԹՐԷՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովայինարկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւունքն է Ի Կ. Պոլիս, Բուքսի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ցերկայացուցիչ Թուրքիոյ

Զ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասնեակ, Պոլիս, Ալեքանաթ Խան,

6-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏՃԻՄԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՅՈՒՆ

ՀԵՐԺԱՅԻ



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌԱՅՈՒՆ

Հերճայի վաճառատունը՝ զօհարդէններու, սփի եւ արծաթ շքաներու, գրպանի, պատի եւ քօնքօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ, իր բազմաթիւ լեճախորդներուն վառանգութենէն քաջալերուած՝ այս ահագն կը փութայ յայտարարել թէ ումէն եղանակի լաւանկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, հանանց եւ աղայաց համար ամէն տեսակ հագուաներ ու աճիւղի համար մուշամպա վերարկուաներ, նաեւ ճերմակեղէններ, ֆաթէղիներ եւ քառփէններ ու ամերիկեան կօշիկներ, Ունի նաեւ կտակարարի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրպակաւ ու աղբիւրան գորգեր, զետի մուշամպաներ, կրամֆօններ ու պիտիքլէթներ՝ ամենավերջին կառարելու թիւններով:

Հերճայի վաճառատունը՝ իրականացնելու լաւօրէն շահած, է հանրութեան վառանգութիւնը եւ զօհարդէնները իր արանքներուն աւելանութեան եւ սփիներու մտքութեան: ձեւաւորութեան եւ աւտօմատիկ համար:

Այս ամէնուն արդէն արժէքին վաճառումն է

ԱՊԱՌԱՌԱՅՈՒՆ

Միայն թէ գնուած արանքին հարիւրին 20ը կտէխիկ. իսկ մնացեալ գումարին համար շարժական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հաթայթել:

Վաճառատունն հաստատուած է

ՄԵՇ-ՇՈՒԿԱՅ, ՈՍԿԵՐՁԱՅ ՄԵՇ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Ահագն մը այլեւի բուսկան է համազուելու համար թէ՛ Հերճայի անմրցելի կաշմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր զօհարդէն իր ամէնէն դժուարեան լեճախորդները: Կանխիկ գնողներու նամար հարիւրին 5 գեղջ:

Սակարկութիւն չկայ:

Շարժական վճարման համար հաւաքչներ միշտ պատրաստ են:

2-10



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵԼ, ԿԵԱՆՔԻ, ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆՔ ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուղարկով արտօնուած

Կեդրոնաւորելին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութեան կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵԼ, ՓՈՒՍԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԴՆԵՐՈՒ, ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ. ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԱՌՔՈՎ ՈՒՂԵՒՈ. ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ կառուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոսա, Ղաւա թիւ, 8-10